ւորապէս Անիի և շրջակայքի եկեղեցիների նկարները, թէև մենք չիմացանք թէ ինչ ծրագրով են ի միասին հաւաքուած։ Նկարների երեսին բարակ թուղթ է կպցրած և նրա վրայ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն գրուած է նկարի անունը, մինչ մեր կարծիքով յարատեւութեան համար լաւ կլինէր բուն նկարի տակը տպել այդպիսի մակագրութիւնները, որպէս զի այդ թերթը պատռուելիս պատկերի անունը անյիշատակ չմնայ։ Պ. Գնուունու վիրձը շատ յաջող կարելի է համարել, մինչև այսօր մենք չունինք մեր բազմաթիւ հնութիւնների գնի կողմից գիւրամատչելի և գեղեցիկ հրատարակութիւնները, նոր ձեռնարկութիւնը խոստանում է երկու կողմից էլ մեզ միանգամայն բաւականացնել։ Սրտանց ցանկանում ենք, որ Պ. Գնուունու սկսուածքը յաջողութիւն գտնի, մանաւանդ եթէ նա կարողանայ իւր գործի մէջ որոշ պատմական—հնագիտական ծրագիր մտցնել։

Մեսրոպ վարդապետ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ռուսական թագաւորութեան հսկաները.—Եւրոպայի գարաւոր կաղնիներն ու լօրիները թէպէտ պատկառելի մեծութիւն և ծաւալ ունին, սակայն համեմատած Հիւսիսային Ամերիկայի անտառներում աճող ծառերի հետ շատ և շատ փոքր են երևում։ Ընդհանրապէս Ամերիկայում բուսական թագաւորութեան տեսակներն արտասովոր զարգացման են հասել և դրա պատճառն այս աշխարհամասի հողի առանձին յատկութիւններն են։ Ցայտնի է, որ քաղաքակրթութիւնը Եւրոպայում անհամեմատ շուտ է սկսուել, քան Հիւսիսային Ամերիկայում. ներկայումս Եւրոպայում բոլոր մշակելի հողերը հերկուում են, ինչպէս և առաջ, հին, պատմական ժամանակներում։ Այսպիսով հազարաւոր տարիների ընթացքում վարուցանքի շնորհիւ Եւրոպայի հողը սնունդարար նիւթերից զրկուել է, հետևապէս և պտղաբերութիւնը

պակասել։ Բոլորովին տարբեր պայմաններում է գտնվում Ամերիկայի հողի մեծ մասը. այստեղ համեմատաբար դեռ նոր են սկսել երկրագործությամբ զբաղվել, երկիր մշակել, այնպես որ հողի ընդարաբար հիւթերն անարատությամբ մնում են և առատ կերակուր մատակարարում իրանց վրայ աճող բույսերին. ամերիկական բանջարները, պտուղները, հացահատիկները և այլն, աւելի խոշոր, ընդարաբար և զարգացած են, քան նրանց համապատասխան տեսակները Եւրոպայում։

Արդէն վաղուց յայտնի է Հիւսիսային Ամերիկայի անտառների հսկայական ծառերի մեծությունը. զբօսնելով այս վիթխարի ծառերի տուներներում, մարդ ակամայից յիշում է մեր երկրի զարգացման վաղուց անցած շրջանները, երբ այս տեսակ հսկաները բուսական աշխարհի սովորական ներկայացուցիչներ էին։ Գաղափար կազմելու համար այս մեծամեծ ծառերի մասին, օրինակ ենք բերում վերջերս Կալիֆորնիայում գտած մի ծառ, որի բարձրությունը մօտ 70 սաժենի է հասնում, իսկ տրամագիծը 7 սաժեն է. բունի շրջապատը դեռևի մօտ 18 սաժեն է, իսկ մի սաժեն բարձրության վերայ 14 սաժեն։ Այս ծառի ամենացած ճիւղը դեռևից 38 սաժեն բարձրության վրայ է գտնվում, այնպես որ նրա տակը Նիւ-Եորքի քանդարկանի շինությունները որ և է մեկը ազատ կտեղավորվէր։ Մինչև անգամ Եղիպտոսի ամենաբարձր բուրգը մի քանի սաժենով նրանից ցածր է։ Երիտասարդ որսորդուհին, միսս Դուլկանը, որ առաջինը գտաւ այս հսկայական ծառը Կալիֆորնիայի անտառների խորքում, նրա անունը դրեց Մաթուսաղայ, թէպէտ անկասկած Աստուածաշնչի Մաթուսաղան տարիքով այս ծառից շատ և շատ փոքր է եղել։ Ներկայումս «Մաթուսաղան» մեզ յայտնի ծառերից ամենաբարձրն է։ Կալիֆորնիայի մնացած հսկայական ծառերից յիշենք և Վիսբեն ծառը, որի խոռոչի մէջով կառքերն ազատ անցուդարձ են անում. կայ և Հերբուլես ծառը, որ 5 սաժեն տրամագիծ ունի. սրա վիշակում մի խանութ է շինուած և երկու սենեակ։ Շատ հայտնապես տեսարան է ներկայացնում ութն եղևնիների խումբը, որոնցից իւրաքանչիւր 35 սաժեն բարձրություն ունի. այս ծառերը կարգով նրան մօտ աճել են և բնակիչներից կոչուել «ութ քոյրեր». այս քոյրերից ամէն մէկը 2 սաժեն շրջապատ ունի։

Մի քանի ժամանակ առաջ Նիւ-Եորքի բնա—պատմական թատրանը ստացաւ մի ծառի կոճղ։ Այն ծառը, որից այս կոճղը կտրել էին, աճում էր հարաւային Կալիֆորնիայում, բոլոր հսկայական ծառերի հայրենիքում. նրա բարձրությունը 46

սաժեն է, իսկ շրջապատը՝ 15 սաժեն։ Այս ծառի գլանակաձև կոճղը, որ թանդարան բերուեց, ունի $1\frac{1}{2}$ ոտնաչափ հաստութիւն և 5 սաժեն տրամագիծ. զարմանալի չէ ուրեմն, որ կոճղի ծաներութիւնը 3000 փութից աւելի է։ Կոճղի երեսները գեղեցիկ կերպով հարթած ու մաքրուած են, այնպէս որ նրանց վրայ պարզութեամբ երևում են բազմաթիւ տարիների շերտեր, որ ինկատի ունենալով կարելի է ծառի ամբողջ պատմութիւնը կազմել։ Իւրաքանչիւր հարիւրերորդ տարու շերտից յետոյ մի սպիտակ տախտակ է կպցրած, այնպէս որ բաւական է միայն այդ տախտակները համարել և կիմացուի, թէ ծառը քանի դար է ապրել կամ իւրաքանչիւր հարիւրամեակում ծառը ինչքա՞ն էր հաստանում։ Ծառի կոճղը 1341 շերտ ունի, ասել է թէ այդքան տարեկան է, որովհետև իւրաքանչիւր տարի մի շերտ է աւելանում. ուրեմն նա «ծնուած» պիտի լինի վեցերորդ դարու կէսերին և վկայ է եղել միջին և նոր դարերի պատմութեան։ Թանդարանի կառավարիչը շատ սրամիտ կերպով օգտուեց այս հանգամանքից և նկարեց մարդկային պատմութեան ընթացքի կարճ և պատկերաւոր տեսութիւն. սրա համար կպցրած տախտակներից իւրաքանչիւրի վրայ գրուած են համապատասխան դարում կատարուած նշանաւոր եղելութիւնները։ Երիտասարդ հասակում ծառը ժամանակակից է եղել Մահմեդին. Խալիֆաց արշաւանքների ժամանակ նա արդէն մօտ 5 դար ապրած է եղել, իսկ իւր հայրենիքի՝ Ամերիկայի գիւտի ժամանակ այդ ծառը հազար տարեկան պատկառելի հասակ ունէր՝ աւելի քանի 2 սաժեն տրամագծով։ Մի խօսքով՝ ուշադրութեամբ դնելով այս հետաքրքիր կոճղը, մի քանի բոպէի մէջ ժամանակագրական կարգով կարելի է հետևել վերջին $13\frac{1}{2}$ դարերում կատարուած եղելութիւնների ամբողջ ընթացքին՝ պատերազմներին, յեղափոխութիւններին, գեղարուեստի յաջողութիւններին, տեխնիկական և գիտական գիւտերին և նուաճումներին։

Շահագիտական տեսակէտից էլ այս ծառը անգնահատելի գանձ է. հաշուած է, որ եթէ նրա բունից հեռագրական սիւներ պատրաստեն, դրանք կբաւականանան 250,000 վերստ երկարութիւն ունեցող գծի համար։ Հեռագրական այսպիսի գծով երկրագունտս հասարակածի ուղղութեամբ 7 անգամ կարելի է փաթաթել։

Աշխարհիս ամենաբարձր մարդը. – Թէոդոր Մախով անունով մի ռուս երիտասարդ համարւում է այժմ ամենաերկար մարդը,

որ նորերս Բերլին էր գնացել հասարակութեան առաջ ելնելու համար։ Բերլինի մարդաբանական թանգարանում Մախովին չափեցին, կշռեցին և բազմակողմանի ննութեան ենթարկեցին։ Լուշան պրոֆեսորը հետևեալ վկայականը տուեց նորան. «Ռուսատանցի Թէոդոր Մախովը 238 սանտիմետր բարձրութիւն ունի (1 սաժէն, 10 մատնաչափ) և երբ և իցէ երկրագնդի վրայ ապրած ամենաբարձր հոկաներից մէկին է։ Նա համարեա ամբողջ գլխով մեծ է ինձ յայտնի ժամանակակից հոկաներից և շատ բաներում գիտութեան համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում։

Եւ իրօք, մինչև օրս Եւրոպայում երևցած բոլոր հոկաները 12—15 սանտիմետրով Մախովից փոքր են եղել։ Մախովի նախնիքը շատ առաջ Ատրիքից գաղթել են Ռուսատան. նրա ծնողներն, ինչպէս և երկու քոյրերը, սովորական կանոնաւոր հասակ ունին. բայց նրա պապը բարձրահասակ էր, թէև հսկայ չէր, և նորա ցեղի մէջ հաշուում են շատ բարձրահասակ մարդիկ, որոնցից մի քանիսը հսկայ կարող էին կոչուել։ Թէոդոր Մախովը հիմա 22 տարեկան է։ Մի գաղափար տալու համար նրա մարմնի մեծութեան մասին, բաւական է նկատել, որ նրա հագած կօշիկը սովորական մարդու կրծքին է հասնում, այն ինչ Մախովի հաղիւ մինչև ծնկերն է հասնում, իսկ մի 12 տարեկան երեխայ ամբողջովին կտեղաւորուի մէջը։ Նա այնքան ծանր է, որ սովորական մահճակալները անկարող են նրա ծանրութեանը դիմանալ։ Մախովին ման ածողը տարեկան 5000 ռուբլի է տալիս նրան և ամէն բան պատրաստ։ Միայն այս անագին վարձատրութեամբ կարելի եղաւ համոզել նրան հասարակութեանը երևալու, որովհետև նա կրթուած մարդ է և միևնոյն ժամանակ ապահովուած, այնպէս որ երկար ժամանակ հրաժարւում էր այդ պատուից։

Զառամեալ կրեայ.—Ներկայումս Բոստանում (Ամերիկա) պահում են մի կրեայ, որ 400 տարեկան է և, ինչպէս հաստատում են կենդանաբանները, դեռ ևս կատարելապէս չի ծերացել ու կարող է էլի երկար ապրել։ Այս հինաւուրց, Կոլումբոսի ժամանակակից՝ կրեան հիմա պատկանում է Վալտեր Բոշիլդին, որ 3000 ռուբլիով գնել է։ Նրան Բոստան տանելիս ձեռք էին առնուած բոլոր նախազգուշական միջոցները։ Առանձին մարդատար գնացք էր վարձուած յատկապէս նրան տեղափոխելու համար. գնացքի մէջ բարեխառնութիւնը երբէք 28 աստիճանից չէր իջնում։